ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0), «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[1]-27.11.2023-ՖՎ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[2]-27.11.2023-ՖՎ-011/0), «Ներքին աուդիտի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[3]-27.11.2023-ՖՎ-011/0), «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[4]-27.11.2023-ՖՎ-011/0), «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[5]-27.11.2023-ՖՎ-011/0), «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[6]-27.11.2023-ՖՎ-011/0), «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[7]-27.11.2023-ՖՎ-011/0), «Հաշվապահական հաշվառման եւ աուդիտորական գործունեության կարգավորման եւ հանրային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[8]-27.11.2023-ՖՎ-011/0), «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[9]-27.11.2023-ՖՎ-011/0) եւ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[10]-27.11.2023-ՖՎ-011/0) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Գեւորգ Պապոյան, Արուսյակ Մանավազյան, Նարեկ Գրիգորյան, Էդգար Հակոբյան	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի	1. 1-ին հոդվածից հանել «ինչպես նաև Հաշվեքննիչ պալատում ծառայության» բառերը: Հաշվեքննիչ պալատում, այդ թվում՝ հաշվեքննություն իրականացնող	Ընդունվել է: Հաշվեքննիչ պալատում ծառայությանը վերաբերող դրույթները հանվել են, որի	Ընդունվել է:

	նախագծի 1-ին հոդված, 4-րդ հոդվածի 24-րդ և 28-րդ կետեր, 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ, գլուխ 6, 59-րդ հոդված(փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ և 7-րդ հոդվածներ:	կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակել իրականացնել քաղաքացիական ծառայություն:	պայմաններում Հաշվեքննիչ պալատում շարունակելու է իրականացվել քաղաքացիական ծառայություն: Միևնույն ժամանակ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում առաջարկվել են փոփոխություններ՝ չխաթարելու համար Լիմայի և Մեխիկոյի հռչակագրերով նախատեսված՝ Հաշվեքննիչ պալատի կազմակերպչական անկախությունը: Հաշվեքննիչ պալատի ծառայողներին վերաբերող որակավորման պահանջները վերաձևակերպվել են որպես Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող քաղաքացիական ծառայողներին ներկայացվող պահանջներ (հոդվ. 38): Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև նախագծի անցումային դրույթներում:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի	2. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանված է, որ «Հաշվեքննիչ պալատն է հաստատում ( ) Հաշվեքննիչ պալատի անդամների եւ	Ընդունվել է: 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը հանվել է:	Ընդունվել է:

	նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	աշխատողների վարձատրությունը»: Նույն նախագծի 55-րդ հոդվածով սահմանված է, որ Հաշվեքննիչ պալատի ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են տվյալ օրենքով: Սույն կարգավորումներին համահունչ Նախագծերի փաթեթում ներառված « Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է լրացնել նոր 14.5-րդ հոդված, ըստ որի Հաշվեքննիչ պալատի ծառայողների վարձատրությունը սահմանում է Հաշվեքննիչ պալատը: Նշված դրույթի եւ Նախագծով նախատեսված կարգավորումների համադրության արդյունքում ստացվում է Հաշվեքննիչ պալատն ինքն է հաստատում Հաշվեքննիչ պալատի ծառայողների, որի մեջ ներառվում են նաեւ Հաշվեքննիչ պալատի անդամները եւ Նախագահը, իր անդամների վարձատրությունը: Նշված դրույթը		

		հակասում է ոչ միայն «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված վարձատրության նույնական մոտեցմանը, այլեւ «Հանրային ծառայության մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր հանրային պաշտոն զբաղեցնող անձ եւ հանրային ծառայող առանց որեւէ խտրականության ունի օրենքով սահմանված չափով վարձատրության իրավունք: Նշված դրույթի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հանրային ծառայողի վարձատրության չափը պետք է սահմանվի բացառապես օրենքով՝ պահպանելով խտրականության արգելքի սկզբունքը: Բացի այդ « Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 1-ին հոդվաով հստա սահմանված էմ որ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն եւ		

		պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, պետական մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրության սկզբունքները, կարգավորվում են նրանց հիմնական եւ լրացուցիչ աշխատավարձերի, պարգեւատրման, դրամական օգնության կազմակերպման եւ վարձատրության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են հենց «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	3.Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-14-րդ կետերով սահմանվում են հաշվեքննության տեսակները, մինչդեռ հաջորդիվ սահմանվում է թեմատիկ հաշվեքննության վերաբերյալ կարգավորումներ, որը սակայն հասկանալի չէ՝ դիտարկվում է որպես հաշվեքննության առանձին տեսակ թե ոչ:	Ընդունվել է: Համապատասխան հոդվածում կատարվել է լրացում:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում	4. Հաշվի առնելով, որ հաշվեքննություն հասակցության	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 14-րդ կետերում	Ընդունվել է:

	փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 14-րդ կետեր (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	սահմանման մեջ Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված այլ չափանիշներ արտահայտությունը վերաբերում է կատարողականի հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների մասնագիտական դատողությունների (կառուցված համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային փորձից ձևավորված մասնագիտական դրույթների վրա) արդյունքում 3E-երի (կատարողականի հաշվեքննության սկզբունքների) պահպանման գնահատումն իրականացնելուն, առաջարկվել է որոշակիացնել այն:	«հաշվեքննություն» և «կատարողականի հաշվեքննություն» հասկացությունների սահմանումները խմբագրվել են հետևյալ կերպ. «1) հաշվեքննություն՝ հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով եւ (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների ու պահանջների եւ (կամ) Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության մեթոդաբանությանը և (կամ) ուղեցույցներին համապատասխան ընտրված այլ չափանիշների պահպանման գնահատում եւ հաշվեքննության արդյունքում ներկայացված առաջարկությունների կատարման հետհսկողություն:»: «14) կատարողականի հաշվեքննություն՝ հաշվեքննության առարկան	

			կարգավորող իրավական ակտերով եւ (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների ու պահանջների եւ (կամ) Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության մեթոդաբանությանը և (կամ) ուղեցույցներին համապատասխան ընտրված այլ չափանիշների միջոցով հաշվեքննության առարկայի՝ տնտեսող եւ (կամ) ռեսուրսային եւ (կամ) նպատակային արդյունավետ լինելու գնահատում.»: Ըստ այդմ, որոշակիացվել է «այլ չափանիշների ու պահանջների» վերաբերելիությունը կատարողականի հաշվեքննություններին՝ վերջիններիս ընտրության նկատմամբ սահմանելով ՀՊ մեթոդաբանություններին և ուղեցույցներին համապատասխանության պահանջ: Ընդ որում, Նախագծի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հաշվեքննիչ	

			պալատը հաշվեքննություններին առնչվող մեթոդաբանություններ եւ ուղեցույցներ մշակելիս հիմք է ընդունում Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքները, ստանդարտներն ու ուղեցույցները:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	5. Հետհսկողություն հասկացության տարակերպ մեկնաբանությունների ռիսկը կառավարելու նպատակով առաջարկվում է հասկացության սահմանման մեջ փակագծում նշել նաև հետհսկողության օտարալեզու համարժեք տերմինը (follow-up)	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան խմբագրում:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	6. Առաջարկվում է սահմանել «աուդիտորի որակավորում» հասկացությունը:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 31-րդ կետով. «31) Աուդիտորի որակավորում՝ «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված որակավորում:»:	Ընդունվել է:

	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	7. Հաշվեքննիչ պալատի նախագահին (անդամին) ներկայացվող պահանջները փոփոխել՝ նախատեսելով ընտրության հնարավորություն նաև հետևյալ չափանիշներին բավարարելու դեպքում ֆինանսների ոլորտում նվազագույնը 7 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում կամ հանրային ծառայության ոլորտում նվազագույնը 7 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան խմբագրում:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	8. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի նախագահի (անդամի) լիազորությունները դադարում են նրա լիազորությունների կատարումն անհնար դարձնող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու դեպքում: **Հաշվեքննիչ պալատի նախագահի (անդամի) լիազորությունների կատարումն անհնար դարձնող ֆիզիկական արատների կամ հիվանդությունների ցանկը սահմանվում է Կառավարության**	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ խնդրո առարկան դիտարկելով ընդհանուր կարավորումների տրամաբանության ներքո. «5) հանրային ծառայության պաշտոնն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող՝ Կառավարության կողմից սահմանված հիվանդությունների	Ընդունվել է:

		կողմից: Վերոգրյալից պարզ չի դառնում, թե ՀՀ կառավարության առանձին որոշմամբ է սահմանվելու Հաշվեքննիչ պալատի նախագահի (անդամի) լիազորությունների կատարումն անհնար դարձնող ֆիզիկական արատների կամ հիվանդությունների ցանկը, թե՞ ղեկավարվելու են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված ցանկով: Այդ առումով առաջարկում ենք Նախագծով հղումները կատարել հստակ և ուղղակի՝ նշելով այն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի անվանումը, որով առաջնորդվելու են:	ցանկում ներառված հիվանդություն ձեռք բերելու դեպքում:»: Համանմանորեն խմբագրվել է նաև Նախագծի 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը: Ցանկը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=150642	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	9. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում բացակայում է ստուգման առարկան, որն առաջարկվում է լրացնել:	Ընդունվել է: Մնացած ստուգման օբյեկտների անալոգիայով, Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը լրացվել է ստուգման առարկայով, այն է՝ 8) իրավաբանական անձը	Ընդունվել է:

			Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում է ընդերքօգտագործում՝ **ընդերքօգտագործման մասով**.	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	10. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն Հաշվեքննիչ պալատի նախագահը իրականացնում է Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությանն ուղղված այլ լիազորություններ: «Այլ լիազորություններ» հասկացությունը որոշակիացման կարիք ունի:	Ընդունվել է: Նշված դրույթը լրացվել է «ՀՀ օրենսդրությամբ պետական մարմնի ղեկավարի համար սահմանված չափանիշների շրջանակում» բառերով:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	11. Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հաշվեքննիչ պալատի յուրաքանչյուր անդամի համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված աշխատանքների բաշխումը պահպանվում է առնվազն 2 տարի ժամկետով: Այնուամենայնիվ, գործնականում կարող է լինել իրավիճակ, երբ Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն ունենա ՀՊ անդամների աշխատանքների բաշխումը վերանայել ավելի կարճ ժամկետում:	Հաշվի առնելով կարգավորման հնարավոր զսպող ազդեցությունը ՀՊ գործունեության արդյունավետության վրա, Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասը հանվել է:	Ընդունվել է:

	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	12. Առաջարկվում է սահմանել, որ աուդիտի և էթիկայի և որակի հսկողության կոմիտեներից յուրաքանչյուրը նախագահի մեկ ՀՊ ոչ գործադիր անդամ:	Ընդունվել է: Նախագծի 12-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «3) Հաշվեքննիչ պալատի աուդիտի եւ (կամ) էթիկայի եւ (կամ) որակի հսկողության կոմիտեների նախագահ կարող է լինել տվյալ կոմիտեի անդամներից մեկը: Հաշվեքննիչ պալատի յուրաքանչյուր անդամ կարող է միաժամանակ լինել միայն մեկ կոմիտեի նախագահ:»:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	13. Առաջարկվում է Նախագծի 14-րդ հոդվածում կարգավորել ներքին աուդիտի գործառույթի նկատմամբ հսկողության իրականացման հարցը՝ որպես անկախության երաշխիք:	Ընդունվել է: Նախագծի 14-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով. «5. Ներքին աուդիտի ստորաբաժանման նկատմամբ հսկողությունն իրականացվելու է Հաշվեքննիչ պալատի աուդիտի կոմիտեի կողմից:»:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի	14. Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝ որակի հսկողության կոմիտեին վերաբերելի հոդվածում նշվում է, որ կոմիտեի եզրակացության հիման վրա	Ընդունվել է: Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասից հեռացնել են «գնահատում է հաշվեքննության խմբերի	Ընդունվել է:

	նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	հաշվեքննողները կարող են խրախուսվել: Կոմիտեների միջև նշված իրավասության մասով տարբերակում չդնելու նպատակով, առաջարկվում է նշված դրույթը հանել:	կատարողականը և Հաշվեքննիչ պալատին է ներկայացնում եզրակացություն նրանց խրախուսման վերաբերյալ» բառերը:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	15. Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ իրավական որակում չի տալիս և դրանց իրավական հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում: Նկատի ունենալով այն փաստը, որ ՀՀ օրենսդրությունը չի սահմանել «իրավական որակում» հասկացությունը, հնարավոր են տարակերպ մեկնաբանություններ, այդ թվում՝ անհամապատասխանություն և(կամ) խեղաթյուրում արձանագրելիս, ինչպես նաև հաշվեքննության կարծիք ներկայացնելիս: Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությունը ճանաչում է «քրեաիրավական որակում» հասկացությունը, առաջարկվում է «իրավական» բառը փոխարինել «քրեաիրավական» բառով:	Ընդունվել է: Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «իրավական» բառը փոխարինվել է «քրեաիրավական» բառով:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի	16. Առաջարկվում է նախագծի 31-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

	մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մաս և 36-րդ հոդվածի 1-ին մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	հոդվածի 1-ին մասում և 36-րդ հոդվածում էլեկտրոնային բառից հետո ավելացնել նաև ոչ էլեկտրոնային բառերը՝ հաշվի առնելով, որ որոշ շտեմարաններ կարող են լինել ոչ էլեկտրոնային ձևաչափով՝ չպայմանավորելով տեղեկատվության հասանելիությունը՝ տվյալների գոյության և հասանելի լինելու ձևով:	Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է «և ոչ էլեկտրոնային» բառերով. «1) հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձից պահանջելու առկա էլեկտրոնային և ոչ էկեկտրոնային շտեմարաններին հասանելիություն, փաստաթղթեր, դրանց վավերացված պատճեններ, անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, այդ թվում՝ հաշվապահական հաշվառման վերաբերյալ, դրանցից դուրս գրելու տեղեկություններ: Օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ տվյալ գաղտնիքի համար օրենքով սահմանված կարգով.»: Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է հետևյալ կերպ. 1. Հաշվեքննիչ պալատին անհատույց եւ ազատ կերպով առցանց հասանելի են Հայաստանի Հանրապետության,	

			պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու հիմնարկների կողմից վարվող էլեկտրոնային ու ոչ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններն ու համակարգերը, տեղեկություններն ու փաստաթղթերը:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	17. Առաջարկվում է Նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից հեռացնել «առկա և հասանելի» բառերը, քանի որ դրանք կարող են պատճառ հանդիսանալ հաշվեքննվողի համար՝ տեղեկատվության չտրամադրման համար:	Ընդունվել է: Նախագծի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից «առկա և հասանելի» բառերը հեռացվել են:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 37-րդ հոդվածի 3-րդ մաս (փաստաթղթային կոդ՝	18. Նախագծի 37-րդ հոդվածով նախատեսված է, որ Հաշվեքննիչ պալատը կարող է հրապարակել եւ Ազգային ժողովին ներկայացնել սույն օրենքի պահանջները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման	Ընդունվել է: Նախագիծի նշված դրույթը լրացվել է «Հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով» բառերով:	Ընդունվել է:

	Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	մարմնի, դրա պաշտոնատար անձի կամ իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկատվություն՝ համապատասխան դեպքի նկարագրությամբ: Առաջարկվում է սահմանել, որ տվյալ գործընթացը պետք է ունենա ընթացակարգային կարգավորումներ:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 57-րդ հոդվածի 1-ին մաս (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	Նախագծի 57-րդ հոդվածով նախատեսված է, որ իր նպատակի ապահովման ու լիազորությունների իրականացման ընթացքում Հաշվեքննիչ պալատը համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ, ըստ անհրաժեշտության այլ սուբյեկտների հետ: Առաջարկվում է կանոնակարգել, որ այլ սուբյեկտների հետ համագործակցությունը պետք է տեղի ունենա այդ թվում՝ հաշվեքննության ապացույցների ստացման նպատակով:	Ընդունվել :	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 59-րդ	19. Հաշվի առնելով, որ Փաթեթը շրջանառվել էր նախորդ տարի, օրենսդրական գործընթացի ժամկետներից ելնելով, առաջարկվում է 59-րդ հոդվածում որակավորման ժամկետները	Ընդունվել է: Որակավորման և որակավորման քննությունների դրույթներն ուժի մեջ մտնելու ժամկետներում «հունվարի 1-ից» բառերը փոխարինվել են են «հուլիսի 1-	Ընդունվել է:

	հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	հետաձգել կես տարով:	ից» բառերով:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 59-րդ հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	20. Անցումային ժամկետներից ավելի վաղ ժամկետներում աուդիտորի որակավորում ձեռք բերելը կամ որակավորման քննությունները հանձնելը, սահմանված կարգավորումներին հակասող դիտարկվելու ռիսկը կառավարելու նպատակով, առաջարկվում է նախատեսել բացառություններ նշված դեպքերի մասով:	Ընդունվել է: Նախագծի 59-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով. «7. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված ժամկետները չեն տարածվում սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված որակավորման և որակավորման քննությունների պահանջներին սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված ժամկետներից ավելի վաղ համապատասխանող անձանց վրա:»:	Ընդունվել է:
	«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եվ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:	21. Հաշվի առնելով ՀՊ անդամների մասով կարգավորման առկայությունը և ՀՊ նախագահի մասով կարգավորման բացակայությունը, ինչպես նաև գործող օրենքով տարբերվող գործակիցներ սահմանված լինելու հանգամանքը, առաջարկվում է տվյալ դրույթը լրացնել նաև ՀՊ նախագահի բառերով:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:

	«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մաս:	«Երկրորդ նախադասությունը հանել» արտահայտությունը առաջարկվում է վերաձևակերպել՝ իրավական տեխնիկայի տեսանկյունից:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան խմբագրում:	Ընդունվել է:
	«Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (փաստաթղթային կոդ՝ Պ-726[1]-27.11.2023-ՖՎ-011/0)	21. «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված լրացման արդյունքում Հաշվեքննիչ պալատում ծառայությունը նախատեսվում է սահմանել քաղաքացիական ծառայությունից առանձի պետական ծառայության տեսակ, մինչդեռ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով շարունակվում են նախատեսվել Հաշվեքննիչ պալատում քաղաքացիական ծառայությանը վերաբերող կարգավորումներ (օրինակ՝ նշված օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով Հաշվեքննիչ պալատում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու իրավասությունը վերապահվում է Հաշվեքննիչ պալատին կամ 19-րդ հոդվածի 8-րդ մասով՝	Ընդունվել է: Նախագիծը հանվել է փաթեթից:	Ընդունվել է:

		քաղաքացիական ծառայողի վերապատրաստման անհատական ծրագիրը Հաշվեքննիչ պալատում հաստատում է Հաշվեքննիչ պալատը):		
ՀՀ կառավարություն	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0)	1.Նախագծով և փաթեթում ընդգրկված «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով Հաշվեքննիչ պալատում ծառայությունը սահմանել որպես պետական ծառայության առանձին տեսակ: Ելնելով նշված առաջարկության հիմքում դրված նպատակադրումներից՝ անհրաժեշտ է նախագծով հստակ սահմանել, որ քաղաքացիական ծառայություն չի իրականացվում բացառապես Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող (աուդիտորական ծառայություն) կառուցվածքային ստորաբաժանումներում, պալատի գլխավոր քարտուղարը, աջակցող մասնագիտական և 2 հաշվեքննություն չիրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են: Ընդ որում, ելնելով քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի	Ընդունվել է մասնակի: Հաշվեքննիչ պալատում, այդ թվում՝ հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակելու է գործել քաղաքացիական ծառայություն:	Ընդունվել է մասնակի:

		առանձնահատկությունների և գործառույթների շարունակականության ապահովան անհրաժեշտությունից՝ առաջարկում ենք նախագծի անցումային դրույթներում նախատեսել, որ հաշվեքննություն իրականացնող քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև Հաշվեքննիչ պալատում նոր ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատումը և օրենքով սահմանված կարգով նոր ծառայության պաշտոնների համալրումը:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	2. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում Կենտրոնական բանկին վերաբերող ձևակերպումը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Կենտրոնական բանկի վարչական և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ հաստատված ՀՀ Ազգային ժողովի կողմից»՝ Կենտրոնական բանկում հաշվեքննության առարկա դիտարկելով միայն Ազգային ժողովի կողմից հաստատված ծախսերի շրջանակում իրականացվող գործունեությունը: Ընդ որում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծի 59-րդ	Ընդունվել է մասնակի: Առաջարկվող՝ «Կենտրոնական բանկի վարչական և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ հաստատված ՀՀ Ազգային ժողովի կողմից» ձևակերպման առնչությամբ հարկ է նկատել, որ. • խոսքը գնում է ոչ թե Կենտրոնական բանկի վարչական ներդրումների, այլ՝ վարչական ծախսերի մասին («Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի	Ընդունվել է մասնակի:

		հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի պաշտոնավարող ծառայողների աուդիտորների որակավորման վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնելու 2028 թվականի հունվարի 1-ին, առաջարկում ենք Հաշվեքննիչ պալատի կողմից Կենտրոնական բանկի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված վարչական և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակի վերաբերյալ հաշվեքննություն իրականացնելու իրավասությունը ևս ուժի մեջ մտցնել 2028 թվականի հունվարի 1-ից, քանի որ թե օրենսդիրը, թե Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանել են որակավորման բարձր պահանջներ Կենտրոնական բանկի արտաքին աուդիտորի նկատմամբ, որոնք առնվազն պետք է պահպանվեն Կենտրոնական բանկի գործունեությունը հաշվեքննության ենթարկող ցանկացած անձի նկատմամբ:	13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետ): • հաշվեքննության չի կարող ենթարկվել սահմանաքանակը, այլ՝ վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների կատարումը, վերջիններս արտահայտող հաշվետվությունը: • հաշվեքննության առարկա է հանդիսանում ոչ թե ծախսերի նախահաշիվը (պլանավորված ցուցանիշները), այլ՝ դրանց կատարողականը՝ արտացոլված հաշվետվությունում: Հաշվի առնելով վերոգրյալը, Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրվել է հետևյալ կերպ. «3) հանրային սեփականություն՝ պետական և համայնքային սեփականություն, այդ թվում՝ պետական և համայնքային բյուջեների միջոցներ (մուտքեր ու ելքեր), ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հաստատված՝	

			Կենտրոնական բանկի վարչական ծախսեր և կապիտալ ներդրումներ.»: Առաջարկվել է նաև անցումային դրույթ, ըստ որի Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրում Կենտրոնական բանկի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների հաշվեքննություն (ստուգում) նախատեսվելու դեպքում, տվյալ հաշվեքննության (ստուգման) առաջադրանքը պետք է ղեկավարի աուդիտորի որակավորում ունեցող քաղաքացիական ծառայողը:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) ..... հոդվածներ	3. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հաշվեքննիչ պալատ պետական մարմինը ներառում է Հաշվեքննիչ պալատը և Հաշվեքննիչ պալատ պետական հիմնարկը: ՀՀ Սահմանադրության 198-րդ հոդվածը նախատեսում է, որ Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի,	Ընդունվել է: Հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ Հաշվեքննիչ պալատի նախագահից և վեց անդամներից բաղկացած պալատի և Հաշվեքննիչ պալատի՝ որպես պետական հիմնարկի, աշխատակազմի նույնացման հնարավորությունը բացակայում է, Նախագծից հանվել են հիմնարկին վերաբերող կարգավորումները: Խնդրո առարկան կկարգավորվի «Կառավարչական	Ընդունվել է:

		պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 199-րդ հոդվածը նախատեսում է դրույթներ կապված Հաշվեքննիչ պալատի կազմի և կազմավորման կարգի հետ: Վերոգրյալը նկատի ունենալով՝ գտնում ենք, որ սույն պայմաններում Հաշվեքննիչ պալատի նախագահից և վեց անդամներից բաղկացած պալատի ու Հաշվեքննիչ պալատի՝ որպես պետական հիմնարկի, աշխատակազմի նույնացման տեսական հնարավորությունը բացակայում է: Իսկ ինչ վերաբերում է «հաշվեքննիչ պալատ պետական հիմնարկին», ապա ենթադրվում է, որ դրա նպատակը հաշվեքննիչ պալատի աշխատակազմի գործունեության վերաբերյալ կարգավորումների նախատեսումն է, ինչի կապակցությամբ առաջարկում ենք որպես օրինակ նկատի ունենալ մյուս անկախ մարմինների հետ կապված կարգավորումները՝ հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների	իրավահարաբերությունների մասին» օրենքի դրույթների համաձայն:	

		մասին» օրենքի դրույթները:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 4-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետ	4. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով նախատեսվում է, որ Հաշվեքննիչ պալատի ծառայողը Հաշվեքննիչ պալատում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն է, հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, աշխատողը: Ստացվում է, որ բոլոր ծառայողները (աշխատողները) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք են համարվելու, մինչդեռ «Հանրային ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ինքնավար պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով սահմանված որոշակի 4 ժամանակահատվածով նշանակովի կամ ընտրովի պաշտոն է: Տարընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է վերանայել շաղկապների կիրառումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է: Հաշվեքննիչ պալատում, այդ թվում՝ հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակելու է գործել քաղաքացիական ծառայություն:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ	5. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով «միջազգային խմբի անդամ հանդիսացող և	Չի ընդունվել: Սահմանումը ներկայացված է ՀՀ	Չի ընդունվել:

	լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետ	միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություն»-ը սահմանվում է որպես աուդիտորական կազմակերպությունների վարկանշմամբ զբաղվող միջազգային ճանաչում ունեցող համացանցային կայքերում գրանցված կամ վարկանշված, համընդհանուր միջազգային ճանաչում ունեցող 10 խոշորագույն անկախ աուդիտորական կազմակերպություններից մեկը: Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ կարող են մատուցել միայն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում գրանցված կազմակերպությունները: Հետևաբար, այլ երկրներում գրանցված աուդիտորական կազմակերպությունները ՀՀ-ում չեն կարող մատուցել աուդիտորական ծառայություններ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ «միջազգային խմբի	օրենսդրությունում առկա նախադեպի անալոգիայով, մասնավորապես՝ «ԿԲ մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. «ԿԲ-ի ֆինանսական հաշվետվությունները յուրաքանչյուր տարի ենթարկվում են արտաքին աուդիտի՝ մասնագիտացված, այդ թվում՝ աուդիտորական ընկերությունների վարկանշմամբ զբաղվող միջազգային ճանաչում ունեցող ինտերնետային կայքերում գրանցված կամ վարկանշված, համընդհանուր միջազգային ճանաչում ունեցող 10 խոշորագույն (բիգ թեն) անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան»: Առկա չէ հակասություն միջազգային խմբի անդամ հանդիսանալու և «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորումների հետ	

		անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպություն» հասկացության սահմանումը ենթակա է վերանայման: Հստակ չէ նաև, թե ինչ համացանցային կայքերի միջոցով են որոշվելու խոշորագույն 10 աուդիտորական կազմակերպությունները:	(մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում գրանցված կազմակերպություն հանդիանալու հետ): Տվյալ գործոնները ոչ թե հակադրվում, այլ՝ համադրվում են: Օրինակ՝ KPMG Armenia-ն հանդիսանում է ՀՀ մասնագիտացված կառույցի ռեեստրում գրանցված կազմակերպություն, միևնույն ժամանակ հանդիսանում է KPMG International Limited-ի անդամ (member firm): Կարգավորման նպատակը ՀՊ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ գնահատականի որակական ավելի բարձր ստանդարտի սահմանումն է: Համացանցային կայքերում դասակարգումն իրականացվում է՝ ըստ աուդիտորական կազմակերպությունների հիմնական ֆինանսական ցուցանիշների, մասնավորապես՝ հասույթի: Ընդ որում, տվյալ	

			կայքերը կիրառում են ոչ թե որևէ մեթոդաբանություն կամ վարկանշավորման ինքնուրույն մոտեցում, այլ պարզապես հավաքագրում են աուդիտորական կազմակերպությունների հրապարակած ֆինանսական հաշվետվությունների հիմնական ցուցանիշները և դասակարգում ընկերություններին՝ ըստ հիմնական ցուցանիշի նվազման կարգով: Մասնավորապես, ՀՀ-ում գործող աուդիտորական կազմակերպություններից թոփ 10-յակում են գտնվում /որպես միջազգային խմբի անդամ/ PWC, EY, KPMG, BDO և GT-ն՝ ըստ հասույթի նվազման:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 6-րդ և 47-րդ հոդվածներ	6. Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում են Հաշվեքննիչ պալատի նախագահի (անդամի) լիազորությունները դադարելու և դադարեցնելու հետ կապված դրույթներ, իսկ նախագծի 47-րդ հոդվածով՝ հաշվեքննիչ պալատի ծառայողի պաշտոնից ազատվելու վերաբերյալ դրույթներ: Նկատի ունենալով, որ նախագծի 39-րդ	Ընդունվել է: Հաշվեքննիչ պալատում շարունակելու է գործել քաղաքացիական ծառայություն:	Ընդունվել է:

		հոդվածի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի ծառայողներ են հանդիսանում նաև Հաշվեքննիչ պալատի նախագահը, անդամները՝ գտնում ենք, որ նախատեսված կարգավորումները կարող են տարընկալում առաջացնել: 5 Նշված դիտարկումը վերաբերում է նաև նախագծով նախատեսված համանման այլ կարգավորումներին, ուստի հիշյալ կարգավորումներն անհրաժեշտ է վերանայել:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ	7. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն ստուգում է իրականացնում իրավաբանական անձի մոտ, եթե իրավաբանական անձն իրավական ակտով կամ պայմանագրով պետական կամ համայնքային աջակցության որևէ եղանակով ստացել է միջոցներ (ներառյալ հարկային արտոնությունները)՝ միայն այդ իրավական ակտերի կամ պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու նպատակով: Ելնելով մասնավոր գործերին միջամտության համաչափության ապահովման անհրաժեշտությունից՝ առաջարկում ենք նախագծում որոշակիացնել «հարկային արտոնությունները» եզրույթը՝	Չի ընդունվել: Նախագծով նախատեսված կարգավորումը համապատասխանում է առաջարկությամբ նշված նպատակադրմանը: Մասնավորապես, Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն. «2. Հաշվեքննիչ պալատը ստուգում է իրականացնում իրավաբանական անձի մոտ, եթե՝ 6) **իրավաբանական անձն իրավական ակտով** կամ	Չի ընդունվել:

		ստուգումների շրջանակը սահմանափակելով անհատական, կոնկրետ սուբյեկտներին տրամադրված հարկային արտոնություններով, բացառելով ստուգումները տնտեսության առանձին ոլորտների (օրինակ՝ գյուղատնտեսություն, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ) համար սահմանվող հարկային արտոնությունների դեպքերում:	պայմանագրով պետական կամ համայնքային աջակցության որեւէ եղանակով (ներառյալ՝ բյուջետային վարկերը, փոխառությունները, երաշխիքները, հարկային արտոնություններն ու այլ ֆինանսական եւ ոչ ֆինանսական գործիքները) **ստացել է միջոցներ՝ միայն այդ իրավական ակտի կամ պայմանագրի պահանջների կատարումը ստուգելու համար**.»: Ըստ այդմ, ստուգման շրջանակը սահմանափակված է տվյալ իրավաբանական անձին հարկային արտոնության տրամադրման վերաբերյալ իրավական ակտի պահանջների կատարման ստուգմամբ և չի վերաբերում ընդհանուր ոլորտային արտոնությունների ստուգմանը:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի	8. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ Հաշվեքննիչ պալատի նիստերը, որպես կանոն, հրավիրվում են ամիսը մեկ անգամ: Նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ	Չի ընդունվել: Առաջարկությունը՝ նիստերի հրավիրման պարբերականության հարցը հերթական և արտահերթ	Չի ընդունվել:

	(փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 9-րդ հոդվածի 2-րդ մաս	Հաշվեքննիչ պալատի նիստը հրավիրվում է Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից: Առաջարկում ենք «որպես կանոն» բառերը փոխարինել «առնվազն» բառով, իսկ, նիստերի հրավիրման պարբերականության հարցն առաջարկում ենք դիտարկել նաև հերթական և արտահերթ նիստերի հրավիրման շրջանակում:	նիստերի հրավիրման շրջանակում դիտարկելու և «որպես կանոն» բառերը «առնվազն» բառով փոխարինելու վերաբերյալ, արտացոլում է գործող պրակտիկան («Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մաս), որը ենթադրում է, որ եթե որևէ ամսվա ընթացքում առկա չլինի օրակարգային հարց, ապա ոչ ճկուն իրավակարգավորման ուժով, միևնույնն է պետք է ինչ-որ կերպ ձևավորվի «արհեստական» օրակարգ և հրավիրվի նիստ: «Որպես կանոն» արտահայտությունը թույլ է տալիս ապահովել ճկունություն ՀՊ-ի ներքին գործընթացների արդյունավետ կազմակերպման հարցում, ինչպես նաև ներկայացված է ՀՀ օրենսդրությունում առկա անալոգիայով (մասնավորապես՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս):	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ	9. Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատը հաստատում է հաշվեքննողներին	Ընդունվել է մասնակի: Համապատասխան հոդվածը	Ընդունվել է մասնակի:

	լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 10-րդ հոդված	աշխատանքի ընդունման չափորոշիչները, սակայն, նկատի ունենալով, որ նախագծով արդեն իսկ սահմանվում են հաշվեքննիչ պալատի ծառայողներին ներկայացվող պահանջները և նշանակելու պայմանները, գտնում ենք, որ նշված դրույթի սահմանման նպատակահարմարությունը բացակայում է: 6 Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Ընդ որում, նույն հոդվածով սահմանվում է, որ հանրային ծառայության անցնելու իրավունքի մանրամասները սահմանվում են օրենքով, ուստի Հաշվեքննիչ պալատի իրավական ակտով աշխատանքի ընդունման չափորոշիչների սահմանումը խնդրահարույց է նաև սահմանադրական հիշյալ կարգավորման տեսանկյունից:	խմբագրվել է: Առաջարկված խմբագրությունը ընդհանուր ձևակերպմամբ որոշակիացնում է, թե ՀՊ-ի համար ինչ պարտավորություն է սահմանվում՝ Օրենքի հոդված 38-ով նկարագրված հիմնական պահանջներն ու պայմաններն այնպես ամբողջականացնելու համար, որպեսզի ՀՊ աշխատակազմը համալրվի պրոֆեսիոնալիզմի, ազնվության և հաշվետվողականության՝ INTOSAI հիմնարար ու առանցքային սկզբունքներին ու ստանդարտներին համապատասխան:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի	10. Նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատի տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից հրապարակվում է դրանց	Ընդունվել է մասնակի: Ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ժամկետների	Ընդունվել է մասնակի:

	(փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 15-րդ հոդված	վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը: Սակայն, նախագծով ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ժամկետներ սահմանված չեն, ինչը կարող է ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պահանջը դարձնել ինքնանպատակ, իսկ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները՝ ժամանակավրեպ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք որպես ֆինանսական հաշվետվությունների հրապարակման վերջնաժամկետ սահմանել հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը, իսկ «աուդիտորական կազմակերպության եզրակացությունը» բառերը փոխարինել «աուդիտորական եզրակացությունը» բառերով:	հարցը կարգավորված է: Նախագծով առաջարկված կարգավորման տրամաբանության համաձայն, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը պետք է տեղի ունենա ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնների շրջանակներում: Հաշվի առնելով, որ Հաշվեքննիչ պալատը հանդիսանում է հանրային հատվածի կազմակերպություն, այն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստում և հրապարակում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի և օրենսդրության համաձայն: Մասնավորապես, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 2-րդ մասի համաձայն, կազմակերպությունը, որի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են	

			հրապարակման, պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները հրապարակել լիազոր մարմնի սահմանած ժամկետներում: Հաշվի առնելով, որ Նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման, ուստի «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված վերոնշյալ դրույթի պահանջի համաձայն, Հաշվեքննիչ պալատը պարտավոր է հրապարակել իր ֆինանսական հաշվետվությունները լիազոր մարմնի սահմանած ժամկետներում: Գործող կարգավորումներով ՀՊ արտաքին աուդիտի առաջադրանքի պատվիրատուն և շահառուն ԱԺ-ն է: Ըստ այդմ, չի հիմնավորվում ՀՊ-ի համար Նախագծի հոդված 15-ի 5-րդ մասով սահմանվող	

			պարտավորությունը: Եթե, տեսականորեն, ԱԺ-ն աուդիտոր չներգրավի, ապա ՀՊ-ն ինչպե՞ս կարող է հաշվետվության հետ հրապարակել նաև աուդիտի եզրակացությունը: Առաջարկությունը և վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով կարելի է դիտարկել կարգավորման հետևյալ խմբագրությունը, որով կլուծվի աուդիտորական եզրակացության հրապարակման ժամկետի հարցը, երբ այն առկա է: «**Հոդված 15. Հաշվեքննիչ պալատի արտաքին աուդիտը** ... 5. Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատի տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից հրապարակվում է դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:»	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ	11. Նախագծի 25-րդ և 29-րդ հոդվածների միջև առկա է որոշակի տարակարծություն:	Ընդունվել է: 29-րդ հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:

	լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 25-րդ և 29-րդ հոդվածներ	Մասնավորապես 29-րդ հոդվածի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը հաստատվելուց հետո այն ներկայացնում է Կառավարություն և Ազգային ժողով, իսկ ընթացիկ եզրակացությունը ներկայացվում է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին: Այնինչ, 25-րդ հոդվածի համաձայն՝ եռամսյակային հաշվեքննության իրականացման արդյունքում կազմվում է հաշվեքննության միջանկյալ հաշվետվություն՝ ընթացիկ եզրակացություն, որը ներկայացվում է Ազգային ժողովին, Կառավարությանը, ինչպես նաև վերաբերելի մասով հաշվեքննության օբյեկտներին:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 27-րդ հոդված	12. Առաջարկում ենք քննարկել նախագծի 27-րդ հոդվածով պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության և ընթացիկ եզրակացության նախագծերը Կառավարություն ներկայացնելու նպատակահարմարության և անհրաժեշտության հարցը:	Ընդունվել է մասնակի: Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, «**Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմվում է** հաշվետու տարվա պետական բյուջեի **ֆինանսական հաշվեքննության միջոցով՝ օգտագործելով** այդ	Ընդունվել է մասնակի:

			տարվա պետական բյուջեի երեք, վեց եւ ինն ամիսների կատարման ֆինանսական հաշվեքննության (այսուհետեւ՝ եռամսյակային հաշվեքննություններ) **ընթացիկ եզրակացությունները**», Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն. «**ֆինանսական հաշվեքննություն՝** հաշվեքննության առարկայի վերաբերյալ կազմված **ֆինանսական հաշվետվությունների գնահատում՝** իրավական ակտերով եւ (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշների եւ պահանջների համեմատությամբ», իսկ նույն մասի 10-րդ կետի համաձայն. «**ֆինանսական հաշվետվություն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով**	

			նախատեսված բյուջեների կատարման հաշվետվություն, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» եւ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ֆինանսական հաշվետվություն.»: Միևնույն ժամանակ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «**Կառավարությունը** յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան **հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում** մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: »: Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրության համաձայն,	

			պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության հեղինակը Կառավարությունն է, նախատեսվում է տվյալ հաշվետվության հաշվեքննության արդյունքներն ամփոփող եզրակացության նախագիծը մեկնաբանությունների համար կարծիքի ներկայացնել Կառավարությանը: Միևնույն ժամանակ, առաջարկության լույսի ներքո Նախագծի 27-րդ հոդվածը լրացվել է մգեցված մասով. «1. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության եւ ընթացիկ եզրակացության նախագծերը ներկայացվում են Կառավարությանը, **ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հաշվեքննության օբյեկտի ղեկավարներին,** իսկ հաշվեքննության հաշվետվության նախագիծը՝ հաշվեքննության առաջադրանքում նշված	

			հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որոնք նախագիծը ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում կարող են ներկայացնել գրավոր մեկնաբանություններ նախագծում ներկայացված փաստերի, առաջարկությունների եւ այլ տեղեկությունների վերաբերյալ:»: Հարկ է նկատել նաև, որ ՀՊ մասին գործող օրենքի համեմատությամբ Նախագծով փոփոխության է ենթարկվել ընթացիկ եզրակացություն հասկացությունը՝ վերջինս հանգեցնելով բացառապես պետական բյուջեի կատարման հաշվեքննության միջանկյալ արդյունքներն ամփոփող փաստաթղթի, իսկ առանձին պետական մարմիններում իրականացված հաշվեքննության արդյուքներն ամփոփող փաստաթուղթը նախատեսվում է անվանել հաշվեքննության հաշվետվություն, որի նախագիծը մեկնաբանությունների համար	

			ներկայացվելու է ոչ թե Կառավարությանը, այլ՝ հաշվեքննության ենթարկված մարմնին, օրինակ՝ առանձին նախարարությանը:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 31-րդ և 33-րդ հոդվածներ	13. Նախագծի 33-րդ հոդվածի համաձայն՝ հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են հաշվեքննողի առաջարկած ժամկետում, որը չի կարող պակաս լինել երեք աշխատանքային օրից, տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական տեղեկատվություն և փաստաթղթեր: Առաջարկում ենք նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել դրույթ, որի համաձայն՝ հաշվեքննության օբյեկտի գործառնությունների ծավալի և տարեկան բյուջետային հատկացումների մեծությունը հաշվի առնելով՝ հաշվեքննողը պարտավոր է ողջամիտ ժամկետ տրամադրել հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց՝ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր տրամադրելու համար:	Չի ընդունվել: Ժամկետի ողջամտության հարցը դեպք առ դեպք մոտեցմամբ որոշման ենթակա հարց է:	Չի ընդունվել:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում	14. Նախագծի 35-րդ հոդվածով սահմանվում են Հաշվեքննիչ	Չի ընդունվել: Նախագծի 35-րդ հոդվածի 3-5-	Չի ընդունվել:

	փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 35-րդ հոդված	պալատի գործունեությունն ապահովող ֆինանսական երաշխիքները (ֆինանսավորման գործընթացը): Միաժամանակ, նույն հոդվածի 3-5-րդ մասերի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով և Հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (ծախսերի նախահաշվի նախագիծը), որը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ անփոփոխ ներկայացվում է Ազգային ժողով: Ընդ որում, Կառավարությունն Ազգային ժողով և Հաշվեքննիչ պալատ է ներկայացնում նաև բյուջետային հայտի վերաբերյալ իր փոփոխությունների հիմնավորումը: 8 Այս համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտի կազմման հետ կապված հարաբերությունների կարգավորումը Հաշվեքննիչ	րդ մասերում, ըստ էության, ներկայացված են ՀՊ մասին գործող օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգավորումները: ՀՀ գործող օրենսդրությունը պարունակում է համանման կարգավորումներ ոչ միայն Հաշվեքննիչ պալատի պարագայում: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն. «3. Պաշտպանը օրենսդրությամբ սահմանված կարգով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում Պաշտպանի և նրա աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) ներկայացնում է պետական լիազորված մարմին՝	

		պալատի կողմից խնդրահարույց է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով ամրագրված միասնականության սկզբունքի տեսանկյունից, բացի այդ, գտնում ենք, որ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված բյուջետային հայտի վերաբերյալ Կառավարության առարկության առկայության դեպքում այն պետական բյուջեի նախագծի հետ անփոփոխ Ազգային ժողով ներկայացնելու պահանջն անհասկանալի կարգավորում է և Հաշվեքննիչ պալատի ֆինանսավորման գործընթացին առնչվող փոփոխությունների նպատակը հստակ բացահայտված չէ:	պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար: 4. Պաշտպանի և նրա աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Պաշտպանին է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ առարկության հիմնավորումը:»: ՀՀ դատական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն. «6. Բարձրագույն դատական խորհրդի հաստատած բյուջետային հայտը կամ միջնաժամկետ ծախսերի	

			ծրագիրը բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված ժամկետներում ներկայացվում է Կառավարություն: 7. Բյուջետային հայտը Կառավարությունն ընդունում և ընդգրկում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկությունների դեպքում այն պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունը Ազգային ժողով և Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկությունների մանրամասն հիմնավորումները:»: «Դատախազության մասին» օրենքի 77-րդ հոդվածի համաձայն. «1. Դատախազության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Դատախազության ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում առանձին	

			տողով՝ որպես Հայաստանի Հանրապետության դատախազություն: 2. Դատախազության բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: 3. Կառավարությունն Ազգային ժողով և գլխավոր դատախազություն է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:»: Հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտին վերաբերելի վկայակոչված կարգավորումների անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ Հաշվեքննիչ պալատի անկախ կարգավիճակից: ԲՀՄ-ների անկախության պարամետրերը հստակ սահմանված են ԲՀՄ-ների միջազգային	

			կազմակերպության հիմնարար սկզբունքներով՝ անկախության երեք բաղադրիչներով՝ գործառութային, կազմակերպչական և **ֆինանսական**: Մասնավորապես, Մեխիկոյի հռչակագրի 8-րդ սկզբունքն ամրագրում է, որ o գործադիրը չպետք է ուղղորդի ՀԲՄ-ի ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը, o օրենսդիրը կամ նրա հանձնաժողովներից մեկը պարտավոր է ապահովել, որ ԲՀՄ-ն ունենա բավարար ռեսուրսներ իր մանդատն իրացնելու համար, o ԲՀՄ-ն պետք է ունենա օրենսդրին ուղղակիորեն դիմելու իրավունք, եթե տրամադրված ռեսուրսները բավարար չեն իրենց մանդատը լիարժեք իրականացնելու համար:	

			Ըստ այդմ, ՀՊ ֆինանսական անկախության մասով նահանջի արձանագրումը չի բխում օրենսդրական նախաձեռնության հիմքում դրված նպատակադրումներից:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 35-րդ հոդված «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (փաստաթղթային կոդ՝ Պ-726[6]-27.11.2023-ՖՎ-	15. Նախագծի 35-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Հարկային մարմնում առկա տեղեկատվության հիման վրա, սույն օրենքով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող Հաշվեքննիչ պալատի ծառայողների համար պետք է ապահովվի Հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով, Հայաստանի Հանրապետությունում գործող՝ միջազգային խմբի անդամ հանդիսացող և միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների՝ ըստ համադրելի պաշտոնների միջին վարձատրությանը համապատասխան աշխատանքի վարձատրություն: Սույն մասում նշված՝ հարկային մարմնում առկա տեղեկատվությունը, Հաշվեքննիչ պալատի պահանջով, պահանջի ներկայացումից հետո 10	Ընդունվել է: 35-րդ հոդվածի 7-րդ մասը հանվել է: «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը հանվել է փաթեթից (փաստաթղթային կոդ՝ Պ-726[6]-27.11.2023-ՖՎ-011/0	Ընդունվել է:

	011/0)	աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնի կողմից ներկայացվում է Հաշվեքննիչ պալատին:»: Միաժամանակ Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետում նախատեսվում է, որ Հաշվեքննիչ պալատը հաստատում է սույն օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան Հաշվեքննիչ պալատի անդամների և այլ աշխատողների աշխատանքի վարձատրությունը: Առաջարկվող կարգավորումը պարունակում է զգալի ռիսկեր, քանի որ բացահայտված չէ թե Հարկային մարմինն ինչ ժամանակահատվածի (ամիս, եռամսյակ, տարի կամ մի քանի տարի) համար է ներկայացնելու Հայաստանի 9 Հանրապետությունում գործող՝ միջազգային խմբի անդամ աուդիտորական կազմակերպությունների միջին վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը: Արդյունքում հնարավոր է, որ Հարկային մարմնի կողմից ներկայացված ցուցանիշներում ներառվի որևէ աուդիտորական կազմակերպություն, որի միջին վարձատրությունը բազմիցս		

		գերազանցի ՀՀ-ում գործող՝ միջազգային խմբի անդամ մյուս աուդիտորական կազմակերպությունների միջին վարձատրությանը, որն իր հերթին հիմք է հանդիսանալու Հաշվեքննիչ պալատի անդամների և այլ աշխատողների աշխատանքի վարձատրությունը որոշելու համար, ինչը կարող է առաջարկվող սկզբունքով հաշվարկելու դեպքում խեղաթյուրել միջինացված աշխատավարձի ցուցանիշը: Բացի այդ հարց է ծագում, թե, արդյոք, որպես հաշվարկային հիմք ընդունված աուդիտորական կազմակերպությունների միջին վարձատրության չափի նվազման միտում գրանցվելու դեպքում, Հաշվեքննիչ պալատի համար աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները նույնպես պետք է վերահաշվարկվեն: Հարկ է նշել, որ նախագծի 35-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պահպանվում են նաև Հաշվեքննիչ պալատի աշխատակիցների գործող սոցիալական երաշխիքները, որոնք մասնավորապես սահմանված են պետական ծառայողների պարգևատրման աղբյուրների և չափերի մասով: Սա նույնպես		

		քննարկման հարց է, քանի որ նախագծով նախատեսվող կարգավորումների համաձայն Հաշվեքննիչ պալատը չի ենթարկվում նույն կանոններին ինչպես մյուս պետական մարմինները, որոնց համար սոցիալական երաշխիքների ներդրումը հանդիսանում է համեմատաբար ցածր աշխատավարձերի փոխհատուցման միջոց: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ նախագծին կից հիմնավորման մեջ ներկայացված չէ տեղեկատվություն՝ վերոնշված կարգավորումներին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության արդյունքների վերաբերյալ: Բացի այդ, այս նախագծերի փաթեթում ներառված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի 10 նախագծով առաջարկվում է սահմանել նոր դրույթ, համաձայն որի Հաշվեքննիչ պալատի ծառայողների վարձատրությունը		

		սահմանում է Հաշվեքննիչ պալատը՝ հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները» և ուժը կորցրած են ճանաչվում գործող օրենքի 1-ին հավելվածում սահմանված՝ Հաշվեքննիչ պալատի նախագահի և Հաշվեքննիչ պալատի անդամի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները: Հաշվեքննիչ պալատի ծառայողների վարձատրությանը վերաբերող առաջարկությունը ընդունելի չէ, քանի որ իրավաչափ չենք համարում ՀՀ պետական բյուջեի մաս կազմող և ամբողջությամբ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող պետական մարմնի աշխատակիցների վարձատրությունը հավասարեցնել միջազգային խմբի անդամ շահույթ հետապնդող մասնավոր աուդիտորական կազմակերպությունների աշխատակիցների միջին վարձատրությանը: Նշված առաջարկության կապակցությամբ կրկին ուշադրություն ենք հրավիրում Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված		

		հանրային ծառայության անցնելու իրավունքի մանրամասներն օրենքով սահմանելու պահանջին: Հարկ է նկատի ունենալ նաև, որ ՀՀ Սահմանադրությամբ անկախությամբ օժտված մյուս մարմինների (օրինակ՝ ՄԻՊ, ԲԴԽ, ինքնավար մարմիններ և այլն) դեպքում ևս վարձատրության նմանօրինակ կարգավորումներ նախատեսված չեն: Ընդ որում, աշխատանքի վարձատրության առաջարկվող կարգավորման նախադեպ չլինելու հանգամանքից բացի, դրա նախատեսումը կարող է հանգեցնել նաև մյուս մարմինների կողմից վարձատրության համապատասխան մեխանիզմի ներդրման ակնկալիքի կամ պահանջի ձևավորման, ինչը, բնականաբար, կհանգեցնի հանրային իշխանության բոլոր մարմինների համար վարձատրության քաղաքականության հարցում կիրառվող միասնական սկզբունքի շեղման: Վերոնշվածով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով, որ հարկատուների կողմից վճարվող հարկերի հաշվին միայն առանձին պետական մարմնի աշխատակիցների աշխատանքի		

		վարձատրության առաջարկվող կարգավորումը հակասում է նաև հանրային իշխանության բոլոր մարմինների 11 համար վարձատրության քաղաքականության հարցում կիրառվող միասնական սկզբունքին, ուստի առաջարկում ենք աշխատանքի վարձատրության կարգավորումների հարցը դիտարկել ընդհանուր վարձատրության քաղաքականության համատեքստում՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության շրջանակներում: Բացի այդ, հայտնում ենք նաև, որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում նշված անձանց կենսաթոշակի իրացման համար հիմք է ընդունվում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված գործակիցը, ուստի «Հաշվեքննիչ պալատի		

		նախագահի» և «Հաշվեքննիչ պալատի անդամի» գործակիցների տողերն ուժը կորցրած ճանաչելը կարող է հնարավոր խոչընդոտ հանդիսանալ, վերջիններիս կենսաթոշակի իրավունքն իրացնելիս: Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար, չնախատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով, նախատեսվում է Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հաշվեքննիչ պալատի համար նախատեսված ծախսերի ընդհանուր գումարի երկու տոկոսին (գործող օրենքով այն հաշվարկվում է Հաշվեքննիչ պալատի համար նախատեսված ծախսերի /առանց աշխատակիցների խրախուսման և համակարգի զարգացման նպատակային ֆոնդի գծով ծախսերի/ ընդհանուր գումարի երկու տոկոսի չափով): Այս կապակցությամբ հարկ ենք		

		համարում նշել, որ նախագծով առաջարկվող կարգավորումների պարագայում Հաշվեքննիչ պալատի համար պահուստային ֆոնդի առկայությունն արդարացված չէ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 12 պալատի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերն ամբողջությամբ բյուջետավորվում են, իսկ այլ ծախսերի մասով պահուստային ֆոնդի նախատեսումը չունի օբյեկտիվ հիմնավորում: Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ նախագծի նշված դրույթների ընդունումը և առաջարկվող տարբերակով Հաշվեքննիչ պալատի բյուջեի ձևավորումը կարող է առաջացնել անկառավարելի ֆիսկալ ռիսկեր, որը գնահատել հնարավոր չէ համապատասխան տվյալների բացակայության պատճառով, ուստի առաջարկում ենք Հաշվեքննիչ պալատում վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորել բացառապես «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց		

		վարձատրության մասին» օրենքով:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 36-րդ հոդված «Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 13-րդ կետ: «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 13.5-րդ հոդված:	16. Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվեքննիչ պալատին անհատույց և ազատ կերպով առցանց հասանելի են Հայաստանի Հանրապետության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հիմնարկների կողմից վարվող թղթային և էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններն ու համակարգերը, տեղեկություններն ու փաստաթղթերը: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Հաշվեքննիչ պալատի գործառույթներն իրականացնելիս Հաշվեքննիչ պալատի համար ապահովվում է, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հիման վրա տվյալների մշակողների կողմից շտեմարանների, ինչպես նաև օրենքով պահպանվող գաղտնիքի հասանելիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կարծում ենք, որ առանց անձի համաձայնության վերջինիս անձնական տվյալներին (բժշկական, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնի	Ընդունվել է մասնակի: Առանձին պետական մարմնին որևէ տեղեկատվության հասանելիությունը կրում է ոչ թե ինքնանպատակ բնույթ, այլ՝ ուղղված է Սահմանադրությամբ և օրենքներով տվյալ մարմնին վերապահված գործառույթների իրականացմանը: Համանմանորեն, ՀՊ-ին՝ առանձին պետական մարմնին հասանելի տեղեկատվությանը հասանելիության տրամադրումն ուղղված է հաշվեքննության գործառույթի իրականացման ապահովմանը՝ հաշվեքննության ենթակա մարմնի գործառույթների իրականացման արդյունավետության և օրինականության գնահատման համար: Էլեկտրոնային շտեմարաններին պերմանենտ հասանելիության դրույթը հանվել է, ըստ այդմ՝ վերացել է նաև տեղեկատվական	Ընդունվել է մասնակի:

		տեղեկություններին) Հաշվեքննիչ պալատի, ըստ էության, անսահմանափակ հասանելիությունը հակասում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում ամրագրված սկզբունքներին, ուստի գտնում ենք, որ հասանելիությունն անձնական տվյալներին կարող է ապահովվել բացառապես, երբ անձը, օրինակ, բժշկական օգնությունը կամ համապատասխան ծրագրի 13 (օրինակ որևէ գյուղատնտեսական ծրագրի) շրջանակներում վարկային միջոցներն ստացել է պետական ֆինանսավորմամբ (հանրային ռեսուրսի օգտագործմամբ) և բացառապես կոնկրետ հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում, այլ ոչ թե մշտական հիմունքներով, ուստի առաջարկում ենք համապատասխան լրացումները կատարել ոլորտային օրենքներում՝ չշեղվելով վերը նշած սկզբունքներից: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք նախագծում հստակեցնել, որ կոնկրետ հաշվեքննության շրջանակներում համապատասխան տեղեկատվական համակարգերին	անվտանգության հավաստիացում անցնելու պահանջը (36-րդ հոդվածի 4-րդ մասը հանվել է): Հաշվեքննիչ պալատին տեղեկատվության հասանելիության շրջանակը փոփոխվել է՝ նախատեսելով հասանելիություն միայն հանրային սեփականության հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվությանը: Ընդ որում, հանրային սեփականությունը սահմանված է որպես պետական եւ համայնքային սեփականություն, այդ թվում՝ պետական եւ համայնքային բյուջեների միջոցներ (մուտքեր ու ելքեր), Ազգային ժողովի կողմից հաստատված՝ Կենտրոնական բանկի վարչական ծախսեր եւ կապիտալ ներդրումներ: Համապատասխան փոփոխություններ են իրականացվել նաև հարակից օրենքների նախագծերում:	

		Հաշվեքննիչ պալատի հասանելիությունն ապահովվում է տեղեկատվական անվտանգության առնվազն ISO/IEC 27001 ստանդարտին Հաշվեքննիչ պալատի համապատասխանության դեպքում:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 41-րդ հոդված	17. Նախագծի 41-րդ հոդվածով սահմանվում են Հաշվեքննիչ պալատում պաշտոնի նշանակվելու պայմանները, այդ թվում՝ աշխատանքային փորձի հետ կապված: Մասնավորապես, հաշվեքննություն իրականացնող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման՝ վարչության պետի և տեղակալի, հաշվեքննության ավագ կառավարչի, առաջին և երկրորդ դասի ավագ հաշվեքննողի համար պարտադիր է Հաշվեքննիչ պալատում աշխատանքային փորձի առկայությունը: Այս առումով՝ հայտնում ենք, որ անհասկանալի է վերը նշված պաշտոնների համար Հաշվեքննիչ պալատում պարտադիր աշխատանքային փորձի առկայության պահանջի սահմանումն այն դեպքում, երբ մյուս բոլոր պաշտոնների պարագայում (այդ թվում՝	Ընդունվել է: 41-րդ հոդվածը հանվել է:	Ընդունվել է:

		Հաշվեքննիչ պալատի նախագահի և անդամների) սահմանված են աշխատանքային փորձի այլընտրանքային տարբերակներ, օրինակ՝ աուդիտորական կազմակերպություններում աշխատանքը: Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշված պաշտոնների համար Հաշվեքննիչ պալատում պարտադիր աշխատանքային փորձի առկայության պահանջի սահմանումը խնդրահարույց է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիության սկզբունքից:		
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 41-րդ հոդված	18. Առաջարկում ենք նախագծի 41-րդ հոդվածի 4-րդ մասում «աուդիտորական կազմակերպությունում ղեկավարի» բառերը փոխարինել «աուդիտորական կազմակերպությունում աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորի» բառերով:	Ընդունվել է: 41-րդ հոդվածը հանվել է:	Ընդունվել է:
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում	19. Հաշվի առնելով, որ օրենսդրությամբ «սկսնակ	Ընդունվել է:	Ընդունվել է:

	փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 41-րդ հոդված	աուդիտոր» հասկացություն սահմանված չէ, հետևաբար, նախագծի 41-րդ հոդվածի 10-րդ մասը ենթակա է վերանայման:	41-րդ հոդվածը հանվել է:	
	«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726-27.11.2023-ՖՎ-011/0) 47-րդ հոդված	20. Նախագծի 47-րդ հոդվածը վերաբերում է Հաշվեքննիչ պալատի ծառայողին պաշտոնից ազատելուն, մինչդեռ 2-րդ մասով նախատեսվում է լիազորության դադարման հիմք: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է նախագծում առանձին տարբերակել լիազորության դադարման և պաշտոնից ազատման հիմքերը:	Ընդունվել է: 47-րդ հոդվածը հանվել է:	Ընդունվել է:
	«Հաշվապահական հաշվառման եւ աուդիտորական գործունեության կարգավորման եւ հանրային վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (փաստաթղթային կոդ՝ Պ-726[8]-27.11.2023-ՖՎ-011/0)	Նախագծով առաջարկվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված արտաքին գնահատման պահանջը չկիրառել Հաշվեքննիչ պալատի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, Հաշվեքննիչ պալատի անդամների և հաշվեքննողների նկատմամբ: Վերը նշվածի	Չի ընդունվել: Նախագծով ներմուծված են որակի ապահովման խիստ երաշխիքներ, այդ թվում՝ որակավորման, հանրային հատվածում հաշվեքննությանը հատուկ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգի, ինչպես նաև ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման ճանապարհով, այդ թվում՝ Որակի հսկողության, Էթիկայի,	Չի ընդունվել:

		կապակցությամբ հայտնում ենք, որ Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ մասնագիտացված կառույցն իրականացնում է հսկողություն **<u>իր անդամ</u>** աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման պահանջների պահպանման նկատմամբ, ինչպես նաև իրականացնում է **<u>իր անդամ</u>** աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում: Միաժամանակ, Հաշվեքննիչ պալատը Օրենքի իմաստով չի հանդիսանում աուդիտորական կազմակերպություն և Օրենքի իմաստով չի մատուցում աուդիտորական ծառայություններ, հետևաբար, Օրենքով սահմանված արտաքին գնահատման չի կարող ենթարկվել: Հայտնում ենք նաև, որ	Աուդիտի կոմիտեների և ներքին աուդիտի ստորաբաժանման, որոնք թույլ կտան ապահովել ստանդարտներով պահանջվող որակի հսկողությունը: Միևնույն ժամանակ, արտաքին գնահատման գործառույթը մասնագիտացված կառույցի անդամ հաշվեքննողների վրա տարածելը հակասում է ԲՀՄ-ների կազմակերպչական անկախության սկզբունքին՝ հաշվի առնելով, որ Հանրային վերահսկողության խորհուրդը հաշվեքննության օբյեկտների ներկայացուցիչներից (ՖՆ, ԿԲ, ՊԵԿ, ԷՆ) կազմված մարմին է: • Լիմայի հռչակագրի 5-րդ բաժնի 1-ին կետի համաձայն, ԲՀՄ-ները կարող են օբյեկտիվ և արդյունավետ կատարել իրենց առաջադրանքները միայն այն դեպքում, եթե նրանք անկախ են հաշվեքննության ենթարկվող կառույցից և պաշտպանված են արտաքին	

		Նախագծով Հաշվեքննիչ պալատի նախագահի, Հաշվեքննիչ պալատի անդամների և հաշվեքննողների նկատմամբ սահմանված է **<u>աուդիտորի որակավորում</u>** ունենալու, այլ ոչ թե մասնագիտացված կառույցին անդամակցելու պահանջ: Իսկ արտաքին գնահատման ենթակա են միայն մասնագիտացված կառույցի անդամները: Այնուամենայնիվ, եթե Հաշվեքննիչ պալատի նախագահը, Հաշվեքննիչ պալատի անդամները և հաշվեքննողներն անդամակցեն մասնագիտացված կառույցին, նրանք պետք է ապահովեն օրենսդրությամբ սահմանված շարունակական մասնագիտական զարգացման պահանջները, որոնց պահպանման նկատմամբ մասնագիտացված կառույցն Օրենքի համաձայն պետք է իրականացնի հսկողություն: Ընդ որում, նման հսկողության բացառումն անհասկանալի է և հակասում է աուդիտորական գործունեության ոլորտում կատարված բարեփոխումների	ազդեցությունից: • Լիմայի հռչակագիրն ամրագրում է նաև հաշվեքննողների անկախությունը, որպես ԲՀՄ-ի անկախության կարևոր բաղադրիչ: Մասնավորապես, հռչակագրի 6-րդ բաժնի համաձայն, հաշվեքննողների վրա հաշվեքննության ենթակա կառույցները չպետք է ունենան ազդեցություն և հաշվեքննողները չպետք է կախված լինեն նման կառույցներից: Հաշվեքննողների վրա հանրային վերահսկողության խորհրդի և մասնագիտացված մարմնի ազդեցությունը նկարագրված է ստորև նշված իրավակարգավորումներում: «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության	

		նպատակներին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:	մասին» ՀՀ օրենքի համաձայն. «Հոդված 28. Մասնագիտացված կառույցի անդամների գործունեության գնահատումը 1. Մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպության և **<u>աուդիտորի</u>** կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման նկատմամբ իրականացվում է արտաքին գնահատում»: ՀՀ ֆինանսների նախարարի 2022թ. հոկտեմբերի 7-ի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» N 420-Ն հրամանի հավելվածի 4-րդ կետի համաձայն. «Արտաքին գնահատման նպատակը աուդիտորական	

			կազմակերպության և (կամ) աուդիտորի կողմից «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի (այսուհետ՝ աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրություն) պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունն է: Նույն հրամանի հավելվածի 42-րդ կետի համաձայն. «Արտաքին գնահատում իրականացնելիս պետք է ձեռք բերվեն գնահատման արդյունքները հաստատող ապացույցներ, ներառյալ՝ աուդիտորական կազմակերպության որակի	

			ներքին հսկողության համակարգի նկարագրությունը, **<u>ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ,</u>** արտաքին գնահատման ընթացքում իրականացված հսկողական ընթացակարգերի արդյունքները, աուդիտորական կազմակերպության ղեկավարության գրավոր հայտարարությունները, ինչպես նաեւ այլ աղբյուրներից ստացված փաստաթղթերն ու տեղեկությունները: Հավաքագրված տեղեկատվությունը եւ փաստաթղթերը պահպանվում են մասնագիտացված կառույցի կողմից սահմանված էլեկտրոնային ֆայլում:»: Նույն հրամանի հավելվածի 55-րդ կետի համաձայն. «Վերահսկողների եւ գլխավոր վերահսկողի պարտականություններն են. 1) **աուդիտորական աշխատանքային**	

			փաստաթղթերի ստուգում՝ գնահատելու աուդիտի անցկացման եւ աուդիտորական եզրակացության համապատասխանությունը աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջներին»:	
	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 182.3 հոդված (փաստաթղթային կոդ՝ Պ-726[2]-27.11.2023-ՖՎ-011/0)	Նախագծով նախատեսվում է օրենսգիրքը լրացնել 182.3-րդ հոդվածով, մինչդեռ օրենսգրքում արդեն իսկ առկա է 182.3-րդ հոդված, ուստի նախագիծն անհրաժեշտ է վերանայել: Միաժամանակ, առաջարկվում է վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացվող 182.3-րդ հոդվածի դիսպոզիցիան՝ տարանջատելով վարչական իրավախախտումների տեսակները և վարչական տույժերը սահմանելով համաչափորեն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
	«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին»	Նախագծով նախատեսվում է օրենքի 9-րդ հոդվածը լրացնել 17-րդ կետով: Նախ հարկ է նշել, որ օրենսդրական ակտերի հոդվածները բաժանվում են մասերի, այլ ոչ՝ կետերի, բացի այդ,	Ընդունվել է: Համապատասխան հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:

	օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-726[9]-27.11.2023-ՖՎ-011/0)	եթե նախագծով նախատեսվում է 9-րդ հոդվածը լրացնել 17-րդ մասով, ապա հարկ է նշել, որ օրենքի 9-րդ հոդվածում արդեն իսկ առկա է 17-րդ մաս: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ օրենքի 9-րդ հոդվածով կարգավորված են օրենքի անցումային դրույթները, որոնք արդեն իսկ ուժի մեջ մտած և իրագործված կարգավորումներ են պարունակում, ուստի հայտնում ենք, որ նախագծով առաջարկվող կարգավորումը չի կարող լրացվել անցումային դրույթներում՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:		